

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
16 մայիսի 2016 թ.
Պետական գրանցման թիվ 60216153

ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

13 ապրիլի 2016 թ.
ք. Երևան

թիվ 29-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՄԱՍՆԱՎՈՐ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ
ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 55.2-րդ հոդվածի 8-րդ մասի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը **որոշեց**

1. Հաստատել մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հեռուստատեսության և ռադիոյի
ազգային հանձնաժողովի նախագահ**

Գ. Բունիաթյան

Կ Ա Ր Գ

ՄԱՍՆԱՎՈՐ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման նպատակով կազմակերպվող և անցկացվող մրցույթի իրականացման ընթացակարգը:

2. Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթն (այսուհետ՝ մրցույթ) անցկացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կարգի համաձայն:

(2-րդ կետը փոփ. 11.05.18 թիվ 39-Ն)

3. Մրցույթին մասնակցում են միայն Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված իրավաբանական անձինք:

4. Մրցույթն անցկացվում է հրապարակային կարգով:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

5. Հանձնաժողովը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում՝ հրապարակելով հետևյալ տեղեկատվությունը՝

- 1) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը,
- 2) մրցույթի մասնակցին ներկայացվող պարտադիր պահանջները՝ համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 55.1-րդ հոդվածի,
- 3) դիմումի ձևը,
- 4) անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
- 5) դիմումների ընդունման ժամանակահատվածը և վայրը,
- 6) լրացուցիչ տեղեկություններ ստանալու աղբյուրը՝ հեռախոս, էլ. փոստ:

III. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6. Մրցույթի մասնակից է համարվում այն իրավաբանական անձը, որը համապատասխանում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 55.1-րդ հոդվածի պայմաններին և մրցույթը հայտարարելուց հետո վեց ամսվա ընթացքում սահմանված կարգով Հանձնաժողով է ներկայացրել մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա ստանալու դիմում (այսուհետ՝ դիմում)՝ համաձայն N 1 ձևի և անհրաժեշտ փաստաթղթեր:

(6-րդ կետը փոփ. 11.05.18 թիվ 39-Ն)

7. Դիմումում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները՝

- 1) իրավաբանական անձի անվանումը,

- 2) գտնվելու վայրը,
- 3) գործունեության իրականացման վայրը,
- 4) պետական գրանցման համարը,
- 5) հարկ վճարողի հաշվառման համարը,
- 6) մուլտիպլեքսի կառուցման և գործարկման համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների մասին, ընդ որում, դրանք պետք է ներառված լինեն Հանձնաժողովի կառավարման ներքո տրամադրված հաճախականություններում,
- 7) դիմումի ներկայացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը:
8. Դիմումին կից ներկայացվում են`
 - 1) ապացույցներ հեռարձակման թվային ցանցը ստեղծելու և շահագործելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների վերաբերյալ,
 - 2) ֆինանսական կարողությունները հիմնավորող փաստաթղթերը,
 - 3) հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագիծը, ներառյալ ցանցի գործարկման ժամանակացույցը:
9. Դիմումին կից փաստաթղթերը ներկայացվում են երկու նույնական փաթեթով` ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) փակ ծրարով: Փաթեթներից մեկը պետք է կազմված լինի փաստաթղթերի բնօրինակներից, մյուսը` կրկնօրինակներից: Փաթեթները պետք է լինեն կարված, համարակալված, «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ, ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում), ընդ որում փաթեթներում ներառված հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագիծը և ցանցի գործարկման ժամանակացույցը պետք է ներկայացվեն առանձին թելակարված:
10. Դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը Հանձնաժողովն ընդունում է մրցույթը հայտարարելուց հետո վեց ամսվա ընթացքում` առձեռն կամ փոստով:
(10-րդ կետը փոփ. 11.05.18 թիվ 39- Ն)

IV. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱԴԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

11. Դիմումների ընդունման ժամկետի ավարտից հետո երեք օրվա ընթացքում Հանձնաժողովը իր պաշտոնական կայքում (www.tvradio.am) հրապարակում է մրցույթի մասնակիցների ցանկը և հրավիրում ծրարների բացման նիստ: Մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել ծրարների բացման նիստին: Նիստում անցկացվում է նաև փորձագետների ընտրություն` ցանցի ստեղծման նախագծի և ժամանակացույցի տեխնիկական փորձաքննություն իրականացնելու համար:
12. Հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագծի և ժամանակացույցի տեխնիկական փորձաքննությունը պետք է իրականացվի առավելագույնը երեք ամսվա ընթացքում: Եթե երեք ամսվա ընթացքում չի տրվում տեխնիկական եզրակացությունը, ապա համարվում է, որ այն համապատասխանում է անհրաժեշտ պահանջներին:
(12-րդ կետը փոփ. 11.05.18 թիվ 39- Ն)
13. Տեխնիկական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո` առավելագույնը 15-օրյա ժամկետում, Հանձնաժողովը կազմակերպում է հանրային լսումներ, որի անցկացման վայրի և ժամի մասին հայտարարություն է հրապարակում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am):
14. Տեխնիկական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո` առավելագույնը երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովը հրավիրում է նիստ և բաց քվեարկության արդյունքում որոշում է ընդունում լիցենզիա տրամադրելու կամ

դիմումը մերժելու մասին: Մինչև քվեարկությունը հանձնաժողովի անդամները դիմումների և կից փաստաթղթերի քննարկում չեն իրականացնում և չեն հրապարակում իրենց դիրքորոշումները դրանց վերաբերյալ, սակայն կարող են հանդես գալ հայտարարությամբ, միջնորդությամբ:

15. Հանձնաժողովը լիցենզավորված անձի ընտրության ժամանակ հիմք է ընդունում՝

- 1) հանրային լսումների արդյունքները,
- 2) տեխնիկական փորձաքննության եզրակացությունը:

16. Քվեարկությունն իրականացվում է ըստ մասնակիցների դիմումների գրանցման հերթականության: Քվեարկությունը կազմակերպվում է մասնակիցներից յուրաքանչյուրի համար առանձին՝ Հանձնաժողովի անդամների համաժամանակյա բաց քվեարկությամբ՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները՝

- 1) հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագծով ներկայացված հեռարձակման ցանցի առաջարկվող սփռման տարածքի չափը,
- 2) մասնակցի կողմից առաջակվող ծառայությունների որակը,
- 3) հեռարձակման թվային ցանցը ստեղծելու և շահագործելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները,
- 4) ֆինանսական կարողությունների չափը:

17. Լիցենզիա տրամադրելու կամ դիմումը մերժելու մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

(17-րդ կետը փոփ. 11.05.18 թիվ 39- Ն)

18. Հանձնաժողովի որոշումը՝ մրցույթում հաղթող ճանաչելու և մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա տրամադրելու մասին, հրապարակվում է այն ընդունելուց անմիջապես հետո: Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա տրամադրելու մասին որոշմամբ Հանձնաժողովը սահմանում է նաև մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պահանջները և պայմանները՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի:

19. Հանձնաժողովի որոշումն ընդունելուց հետո երեք օրվա ընթացքում ուղարկվում է մրցույթի մասնակիցներին:

20. Մրցույթի մասին ամբողջական տեղեկատվությունը Հանձնաժողովը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ մեկամսյա ժամկետում:

V. ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

21. Հանձնաժողովն իր որոշմամբ մրցույթը հայտարարում է չկայացած, եթե՝

- 1) սահմանված ժամկետում ոչ մի դիմում չի ներկայացվել.
- 2) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագծի և ժամանակացույցի տեխնիկական փորձաքննության արդյունքում տրվել է բացասական եզրակացություն, ընդ որում այս դեպքում հանրային լսումներ չի անցկացվում.
- 3) ներկայացված դիմումներից ոչ մեկը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության և սույն կարգի պահանջներին.
- 4) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագծով ներկայացված հեռարձակման ցանցի առաջարկվող սփռման տարածքի չափը չի համապատասխանում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 55.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջին:

(21-րդ կետը լրաց. 11.05.18 թիվ 39- Ն)

Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության
լիցենզավորման մրցույթի անցկացման կարգի

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի նախագահ

_____ -ին
(անուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՄ

Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա ստանալու

Դիմումատուի անվանումը _____

Գտնվելու վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. հասցեն _____

Պետական գրանցման համարը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Տեղեկություններ մուլտիպլեքսի կառուցման և գործարկման
համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների մասին

Կից փաստաթղթեր.

- 1. ապացույցներ հեռարձակման թվային ցանցը ստեղծելու և
շահագործելու
համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների վերաբերյալ _____ թերթ,
- 2. ֆինանսական կարողությունները հիմնավորող փաստաթղթերը _____ թերթ,
- 3. հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագիծը,
ներառյալ ցանցի գործարկման ժամանակացույցը _____ թերթ,

Ընդամենը` _____ թերթ:

Տնօրեն _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

(օրը, ամիսը, տարեթիվը)

*Կ.Տ. (կնիքի առկայության
դեպքում)*

(ձևը փոփ. 11.05.18 թիվ 39-Ն)
(հավելվածը փոփ., լրաց. 11.05.18 թիվ 39-Ն)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
(վերնագիրը փոփ. 11.05.18 թիվ 39-Ն)

ԼԻՑԵՆԶԻԱ

(սերիան, համարը)

ք. _____

_____ (լիցենզիան տալու օրը, ամիսը, տարեթիվը)

տրվում է

_____ (իրավանբանական անձի անվանումը)

_____ (գտնվելու վայրը)

գործունեության
տեսակը

գործունեության
իրականացման վայրը

լիցենզիայի գործողության
ժամկետը

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

_____ (ստորագրություն)

Կ.Տ.

_____ (անուն, ազգանուն)

(հավելվածը փոփ. 11.05.18 թիվ 39-Ն)